

մնացորդներն, յորս և Յաւերժնար-
ասնց ակննաւն: Այս ամեն աւերակ-
ներն Տիրեր անուանեալ լեռան մը գա-
գաթան վրայ են, որուն ծայրէն կը
տարածուի աչաց առջին չըջահայեաց
հիանալի տեսարան մը:

Կղզւոյն մէջ երկու աւան կայ Գաբրի
ու Անագաբրի կոչեցեալ, որոց երկուքն
ալ բարակաց վրայ շինուած են, և ունին
գրեթէ հինգ հազար ժողովուրդ: Այս
երկու աւանաց մէջ Գաբրին գլխաւոր
համարուած է, և կ'իյնայ կղզւոյն վեր-
ջին արևելեան ծայրը. ունի 300 տուն՝
փոքր բայց գեղեցկաշէն, և հինգ եկե-
ղեցի արևելեան ճարտարագետու-
թեամբ շինուած գմբէթներով: Հիւ-
նալի է իր այգեստանաց բուսաբերու-
թիւնն. ուր կը տեսնուի մինչև արմա-
ւենին իսկ սաղարթագեղ ուռնացեալ:
Տեղացիք ըստ մեծի մասին կ'ապրին
յարդեանց երկրի ու ձկնորսութեամբ:

Այս կղզւոյն մէջ համբաւուոր մեծա-
տարած անձաւ մը կայ, որ մինչև ցամա-
կ 1832 անձանօթ մնացեր էր, և գըտ-
ուեցաւ նոյն տարին և կոչուեցաւ կա-
պուսակ ակննաւ, զոր ներկայացուցած
եմբ ընթերցողաց 'ի պատկերի, որուն
գիւտն այս կերպով եղաւ: Երկու Անգ-
ղիացիք լուղալու փորձ ընելու ատեն
կղզւոյն ափուկքը, մէջերնէն մէկը ծով
եզերքը չըջապատող քառաժայռից մէջ
քարայր մը կը տեսնայ, և առանց վախ-
նալու սիրտ կ'ընէ ու ներս կը մտ-
նայ. և ահա 'ի մեծ զարմանս կը գըտ-
նայ յանկարծ ինքզինքը տարորինակ
լճակի մը մէջ, գրեթէ քառորդ մոր-
նի ընդարձակութեամբ, և կը տես-
նայ զանձն կապուտակացեալ. վասն զի
հօս ամենայն ինչ կապուտակ է, թէ
քարերն թէ ջուրն թէ աւազն և թէ ս
և է առարկայ. որովհետև անձաւը ծո-
վէն բաժնող ժայռն գրեթէ ջրոյն հա-
ւասար իջնալուն, լոյսն կը թափանցէ 'ի
ներքս բեկբեկմամբ, անցնելով ծովուն
երկնագոյն ալեաց մէջէն, անոր համար
կը լուսաւորէ անձաւը կապուտադոյն:

Այս զարմանալի անձաւին ամենա-
բարձր գմբէթը ձևացած է բլուրեղա-

ցեալ ժայռերէ, և մուտքը շատ դժուա-
րին է. որուն համար կը գործածեն տա-
փակ նաւակ մը, որուն մէջ պէտք է ե-
րեսի վրայ տարածուիլ, և սպասել որ
նաւավարն յարմար վայրկեանն զըտ-
նալով մզէ նաւակն 'ի ներքս՝ ալեաց օգ-
նականութեամբ: Այս փորձը երբեմն
պէտք կ'ըլլայ կրկնել բազում անգամ,
վասն զի մէկէն չի յաջողիր, և շատ ան-
գամ վտանգաւոր իսկ է: Կը պատահի
և երբեմն որ ներս մտնելէն ետքը
ջուրը կը բարձրանայ և անկարելի կ'ըլ-
լայ դուրս ելլալ մինչև որ ջուրը չի ցած-
նայ:

Բաց 'ի կապուտակ անձաւէն կայ և
կանաչ անձաւ այս կղզւոյն մէջ, որ և
սա նշանաւոր ու հիանալի է, որուն
մուտքն չէ այնչափ դժուարին որպէս
առաջնոյն: Այս երկրորդ անձաւն ունի
և այս առաւելութիւնը, որ յամենուստ
փակուած չէ, այլ ունի վարը պզտի
անցք մը որ դուրս կը հանէ: Այս կող-
մերը ծովը սաստիկ խորունկ է, և
կ'ըսեն թէ կը գտնուի հօն ինչուան շա-
նաձուկն:

ԲԵՒԵՌԱՅԻՆ

ՆՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԻՔ.¹

ՆՍՈՒՍՏՈՒԹ Զրէյայ: — ՍՂԵՏԻ ՄԻՌԻԵՐՈՒԹԻՔ:

Քրիստիանիան ստող Գազզիլոյ հիւ-
պատն Պ. Հէփ երկու բեւեալին ճա-
նապարհորդութեանց կատարածը հրաւ-
տարակեց օրագրաց մէջ, յորոց յայտ-
նի կ'երևնայ թէ ինչպէս յաճախ ընդ-
ունայն կ'ելլեն աշխարհախնդրաց այս
տեսակ արշաւանքները:

Ա

ՆՍՈՒՍՏՈՒԹ Զրէյայ.

Զրէյա նաւը 1872ին Նորուեկիայի
այն ուժով նաւերէն էր, զոր ամեն տա-

¹ Տես ԱՍ տարի, էրես 338:

րի կը խաւրէ Նորուեկիա դէպ 'ի սա-
ռուցեալ բեւեռ, ծովային հորթեր և ու-
րիչ երկակենցաղ կենդանիներ որսալու
համար: Նաւապետն Դոպիէսէն՝ որոյ
հետ կային նաև ուրիշ շատեր ալ, միտ-
քը դրած էր սեպտեմբերի վերջերը Նոր-
ուեկիա դառնալ. սակայն իր կարծեացը
հակառակ, սառույցները կոտորելու և
ճամբայ բանալու շատ մ'ունայն ջան-
քեր ընելէն վերջը, իմացուց ընկերա-
քը՝ որ պէտք էին ձմեռը հօն անցը-
նելն յանձն առնուլ:

Ահաւոր էր առաջարկութիւնը, վասն
զի գրեթէ ինն ամիս պէտք էին մնալ
այն անօդնական երկիրը, բևեռային
միայնութեան և դիշերային խաւարին
մէջ թաղուած. և կը մտածէին որ եթէ
աշունն այսպէս սոսկալի ցուրտ կ'ընէր,
ձմեռն ինչ պիտի ըլլար: Այլ ամենէն
երկուշաբթի այն էր՝ որ այնչափ ժամա-
նակուան բաւական պաշար չունէին.
վասն զի միայն 1872ի արշաւանաց
համար կարևոր եղածն հողացեր էին.
և անլուր բան մ'էր իրենց համար որ
հոկտեմբերի վերջերը ճամբաները դո-
ցուին:

Հարկ եղաւ որ ունեցած պաշարներն
աչքէ անցընեն, և տեսան որ եղածը
չէր բաւեր այն նաւուն մէջ եղող ան-
ձանց. այլ միայն չորս հինգ հոգւոյ
համար հազիւ ուտելիք կար, և զայն
պէտք էր մեծ խնայութեամբ անտեսել:
Իսկ եթէ ուզէին զամինն ալ կերակրել՝
մահը անխուսափելի հարկ մ'էր: Այն
ատեն եօթն հոգի 'ի նաւաստեաց միտ-
քերնին գրին նաւը թողլու: Առագաս-
տաւոր նաւակ մը տրուեցաւ իրենց,
քանի մը տուփ ծծմբառ, երկու հրա-
ցան, վառօդ, կապարէ գնդիկներ,
կողմնացոյց, դիտակ մը, տասնուչորս
հաց, չայ, չաքար, հազիւ մէկ կերա-
կրոյ մը համար բաւական արջու միս,
կաթսայ, սան և նաւակի ծածկոց: Այս
խեղճ թռչակով ձեռք զարկին ահաւոր
ճամբորդութեանը, և թողուցին նա-
ւուն մէջ Դոպիէսէն նաւապետը, իր
որդին, նաւաստեաց զլխաւորն և խո-
հարարը:

Եթիմ նաւաստիքն 'ի սկզբան կտոր
մը տեղ սառույցին վրայէն նաւակին
գլուխը դէպ 'ի հարաւ ուղղեցին, յու-
սալով որ նաւու մը կը հանդիպին և
կամ վայկաց կղզիները կը հասնին, ուր
գոնեա կարող ըլլան Սամոյետաց քով
ապահով բնակութիւն գտնել: Հետեւ
նին եղած կերակրոյ ողորմելի պաշարը
չուտով լմնցաւ, և թէպէտ ճամբան մէկ
արլ և քանի մը ծովային հորթեր ճա-
րեցին, բայց ասոնք ալ չէին բաւեր
ճամբորդութեան համար:

Ծովը քանի կ'երթար կը գէշնար,
հովը կ'աւելնար և ցուրտը կը սաստ-
կանար: Խեղճերը շատ մըրիկներու
դէմ՝ ալ կուռեցան: Այսպէս երեք
չարսթ նաւարկեցին, առանց ժամա-
նակն ալ ստուգիւ գիտնալու, որով
հետև օրացոյց չունէին: Յիսուն մլոնի
չափ ճամբայ ըրած կը համարէին երբ
երկու տնակներ տեսան: Մեծ փութով
վազեցին հօն որ թիրեւս ուտելու բան
մը գտնան, բայց յոյսերնին պարապ-
եաւ: Տնակներն ամայի և բոլորովին
ունայն էին, և սրոնց մէջ քիչ մ'ատեն
երկու Ռուսք բնակած էին: Դիւրաւ
ճանչցան Նորուեկիացիքն որ Սագից կո-
չուած կղզիներուն մէջն էին:

Սակայն այս դժբաղդ ճամբորդու-
թիւնը՝ այնպիսի խեղճութեան հասու-
ցեր էր զիրենք, որ հիւանդութենէ և
յոգնածութենէ ստիպեալ, որոշեցին
այն տխուր առաւելին մէջ բնակել,
գոնեա մինչև որ ուժերնին տեղը գայ:
Ամենուն օտուրներն ուտեր, և ու-
մանց ալ մէկ քանի անդամներն արդէն
սառեր էին, երկու արիագոյնք՝ հրա-
ցանը ուսերնին զարկին և որսի գացին,
մինչդեռ իրենց ընկերքը բնակութիւն-
նին կարգի կը դնէին: Բարեբաղդա-
բար կրցան սպաննել ծովու հորթ մը,
երկու կապտագոյն աղուէս և չորս եղ-
ջերու:

Բայց երբ կենդանիք զարհուրելով՝
ալ չեսեցան, այնուհետև անկարելի էր
հօն բնակիլը: Ռուսք բախիւր մը թո-
ղուցեր էին, որ իրենց նաւակէն ա-
ւելի օգտակար էր, վասն զի կրնային

անով դէպ 'ի հարաւ յառաջել, որով հետև ծոփն ալ ներս քաշուեր էր : Երեք շաբաթ յոգնութիւն աննելէն վերջը, բոլոր կահկարծուիքը նաւակէն բախարին մէջ փոխադրեցին . որուն լծուեցան երկու հոգի , որոնք հրացան չունէին : Այսպէս սկսան եղբրէն երթալ, միշտ վայկաց կղզիներուն հասնելու յուսով : Բայց այս հետի ճամբորդութիւնն ալ նաւարկութեան պէս դժուարին եղաւ . ցուրտը սուկայի էր և ձիւներուն դէպերը ճամբաները կորսնցնել կու տային : Այս նեղութեանց ատեն երկու որսորդքն ալ աներևութացան , և անոնց հետ կերակուր գտնալու յայտն ալ : Մնացած հինգ նաւաստիքն ամենն ալ տկար և զարհուրանաց մէջ էին : Ինչ կրնային բնել . շարունակել ճամբանին՝ յորում մահը անհրաժեշտ էր , թէ դառնալ անակնին՝ յետին վարկեանին քիչ մը ուշացնելու համար : Իրենց տարակոյսը վիճակով ուղեցին որոշել , և վիճակն ելաւ՝ որ ճամբանին շարունակեն : Կտոր մը ուտելիք ունէին , և զոր կարելի եղած խնայութեամբ կը գործածէին : Շատ դժուարաւ ու դանդաղութեամբ կը յառաջէին : Գիշերը ձեան մէջ փոսեր կը բանային քնանալու համար . բայց պէտք էր որ մէկը պահապան կենար , որպէս զի արջերը հեռացընէ , կամ ուշ դնէ որ չըլլայ թէ ձիւնը այս խեղճ բնակարանին վրայ դիզուելով՝ կամարը փայընէ և մէջինները խողէ . դարձեալ քնացողներն արթնցընելու համար, զորոնք երկար թմբուութիւն մը կրնար քունէն 'ի մահ փոխել :

Քիչ ատենէն բոլորովին ուտելիքնին լնացաւ : Վեցերորդ գիշերը մէկն մեռաւ . մէկաքնոնք՝ յոգնած , անօթի , հիւանդ՝ թողուցին իրենց բախարին ալ և ամենայն ինչ, որպէս զի գոնեա կտոր մը տեղ ալ ստրով յառաջին : Այսպէսով 14 մլոն քալեցին երկու օրուան մէջ :

Ամեն ակնկալութիւն կորսնցուցած կը կարծէին , երբ յանկարծ տեսան փայտի կոյտ մը և բախարի հետքեր ,

զորս ձիւնն դեռ չէր կրցած ծածկել : Արդեօք չըլակայքը մարդ կը գտնուէր : Անակնկալ յոյս մը այս խեղճերը երկարացուց , որոնք արդէն գրեթէ մէկ մէկ դիակ դարձեր էին , և հինգ մլոն ալ իրենք զիրենք քաշքըշխով, վերջապէս Սամոյեաներու բնակած խրճիթ մը հասան :

Խրճիթին բնակիչքը մեծ կարեկցութեամբ զատուր ընդունեցան : Սամոյետնեցն եօթն հոգի էին , երեք էրիկ մարդ , երեք կնիկ մարդ և մէկ մանչ տղայ մը , որոնք եկեր էին Սաղեբու գաւառին կանխորոնս կոչուած մասին հարաւային կողմը բնակելու , երկակնցաղ կենդանիք որսալու և ուրիշ տեղուանք տանելու ու վաճառելու համար :

Այս պզտիկ խումբը Նորուեկիացուց չորս կողմը առած այնքան խնամք տարին , որ վերջապէս կրցան ոտք հանել : Սամոյետը հետերնին ամեն տեսակ ուտելիք ունէին առատօրէն . մանաւանդ եղջերուի միս , ալիւր , չայ , շաքար , և այլն : Շատ յայտնութեամբ կը գործածէին զայլախաղէ բերան ունեցող հին հրացանները . և ոչ միայն բախարով որսի կ'երթային , որոնց հետքը Նորուեկիացուց փրկութեան առիթ եղեր էր , հալպա նաև երբեմն նաւակով : Գարձեալ մեծակն նաւ մ'ունէին՝ որով իրենք եկեր էին :

Նորուեկիացի նաւաստիքն հօտ անցուցին մնացած ձմեռը . երբ օդը աղէկ ըլլար , իրենց սասնիչականներուն հետ որսի կ'երթային . եթէ գէշ խրճիթին մէջ ներսը այլ և այլ խաղերով կը զբօսնուին : Այսպիսի հանգիստ կեանքով կատարելապէս առողջացան , բաց 'ի մէկէն , որ սամոյլ ձմեռը անկողին անցուց՝ մարմնոյն սառած մասերուն պատահառաւ : Շատ կը ցաւէին որ մէկալ երկուքն մէջտեղ չկային : Մարտ ամսուն երբ վառելու փայտը լքնցաւ , խրճիթը քակեցին և անոր տեղ եղջերուի մարթէ վրան շինեցին , ինչ ալ ըլլար օդը՝ Սամոյեաններն օրը առանց շարժման չէին անցըներ : Եղջերուի տաք արևն կը խմէին , և ասիկայ զի-

րենք աղետաց հիւանդութենէ կը պահէր :

Սակայն այս Սամոյետներն ալ ուրիշ բարբարոսաց նման փոփոխամիտ և թանձրամիտ էին : Կրօնքինն ուրիշ կրօնքի նմանութիւն չունէր . և թէ պէտ ուսերէն կը խօսէին , և անոնց քահանաներէն քարոզուած էին , բայց կրօնքինն ուսաց կրօնքէն շատ տարբեր էր : Եթէ ընտիր որս չկարենային զարնել , հրացանի հարուած մը կ'ուղղէին արևուն , ըսելով որ՝ « Քրիստոս իրենց նեղացեր էր » . և այս հրացանի հարուածին նպատակն էր զՍատուած ՚ի գութ շարժել : Որչափ ալ մէջէրնին տարածայնութիւնք կը տիրէին , սակայն իրենց հիւրերը մարդասիրաբար խնամելէն ետ չկեցան : Ամեն աշխատութիւն և ջանք յանձն առին ճամբուն վերայ մեռնողին դիակը գտնալու համար՝ որպէս զի թաղեն , բայց չկրցան : Ապրիլի վերջերը յանկարծ եկան այն տառապանաց մէջ կորսուած երկու որսորդքն ալ , որոց մէկուն անունն Օլսէն էր , միւսին՝ Նենրիկ Նիէլսէն , և պատմեցին թէ ինչպէս անցուցեր էին այն վեց ամիսը , բնուային խաւարին մէջ կորսուած , և ինչ կերպով վերջապէս կրցեր էին սպասել :

Բախիրին քով ժողվուած խմբէն բաժնուելնէն ետքը՝ հասկըցան որ շատ հեռուն գացեր են . բայց հողմախառն խիտ ձիւն մը ամեն ճամբայ գոցեր էր : Երբ իրենք զիրենք այն միայնութեան մէջ տեսան , մտածեցին որ միւս ընկերներն առանց իրենց օգնականութեան չեն կրնար ճամբանին շարունակել , և անշուշտ ճուռաց տնակները կը գտնան . ուստի իրենք ալ դէպ ՚ի այն կողմը սկսան երթալ մեծ աշխատութեամբ , և օդին խստութեանը պատճառաւ հազիւ կրցան չորս օրէն ետքը հասնիլ խեղճ վիճակի մը մէջ . վասն զի ընկերներնէն բաժնուելուն ժամանակ միայն լիպրէ մը միս ունէին : Տնակներուն մտակցեր էին երբ Նիէլսէն դարձաւ նայեցաւ որ ընկերը կորսնցուցեր էր : Սաստիկ տկարութենէն չկարենալով

զանկիպ փնտռելու ելլալ , հազիւ ինք զիրենք տնակը ձգեց . ուր կրակ վառելով աղուէսին մսէն կտոր մը խորոս վեց , քանի մը պատուռ բերանը դրաւ և ընկաւ պառկեցաւ կրակին քով , մանաւանդ թէ թմրեցաւ մնաց :

Իսկ Օլսէն ընկերն մնացեր էր ձեան վրայ պարտասեալ և անյուշ : Այն նուազմանէն զինքն արթնցընողն ա՛նթութութեան բուռն հարկն եղաւ . սկսաւ կատաղաբար խածկըտել եղջերուի մը նոր մորթը՝ զոր զգեստի տեղ կը գործածէր . և կը ջանար դէպ ՚ի տնակը քաջբռտել ինքզինքը , բայց չկրնալով , բռնադատուեցաւ հօն տեղ ձգած նաւակնուն մէջ իյնալ քնանալ : Հանդըստութիւնը քիչ մ'ուժ բերաւ վրան . բոլոր ջանքը բանեցուց տնակը երթալու համար , և վերջապէս հասաւ : Իր ընկերօր ձգած ոսկրի կտորները աղէկ մը կրծեց , և դիական մը նման ընկաւ Նիէլսէնի քով :

Երկրորդ օրը երկու դժբաղդքն հազիւ կրցան ուրք ելլալ : Իրենց ընկերներուն կենեաց վրայ յուսահատած էին , զանոնք ձեան մէջ խզողուած համարելով , և մտքերնին դրին մնացած հինգ ամիսն ալ հօն ձմերել : Առջի տասնուհինգ օրը չկրցան աղէկ որս մը ձեռք ձգել . պէտք եղաւ կրծել ոսկորներուն կտորները , զորս մէյմը նետելնէն վերջը կրկին ա՛նոնց կարօտ կ'ըլլային : Բայց այն կերակուրը 48 ժամ չէր բաւեր իրենց՝ եթէ չգտնային երբեմն ձեան վրայ տնակին չորս կողմերը ծովու հորթու սառած մսի կտորներ , զորս թուրք սպաններ էին :

Ծննդեան տօնի ժամանակները յաջողեցան եղջերու մը զարնել : Բայց որսէն դառնալնէն ետքը կրակնին մարած գտան , և ուրիշ ծծրբառ չունէին : Այս դժբաղդութիւնն մինչև այն ատեն իրենց գլուխն եկածներուն ամենէն ծանրագոյնը կրնար սեպուիլ . բայց չփամամբ խծուծի մը կտոր բռնկցընելով՝ կրցան նորէն կրակարանին արծարծել . բայց փայտերնին սկսաւ պակսիլ , հարկ եղաւ որ երկու տնակներէն

մէկը կործանեն . և այս բանիս համար ամեն ճարտարութիւննին ու ճիգերնին թափեցին . որովհետեւ գործիք չունէին , որք ձեան մէջ կորսուած ընկերակցաց քով մնացած էին : Թողած նաւակէն երկաթէ գաւազան մը հանեցին , ու քարերով ծեծելով դանակ դարձուցին . նոյնպէս ալ նաւակին գամերն ասեղի տեղ գործածեցին , եղջերուի մորթէ զգեստ շինելու համար , իսկ թելի տեղ եղջերուին մորթին բարակ փոկերն և առաջատին կտորները : Հօն ձմերած ժամանակնին տասն ումէկ եղջերու սպաննեցին և արջ մը . և անանկով կրցան մինչև ապրիլի վերջը ապրիլ :

Բայց տեսնելով թէ միայն երեք հարուածի բաւական հրացանի վառօդ մնացեր էր քովերնին , ու կրած նեղութիւններէն և անօթութենէ բռնադատեալ թողուցին բնակութիւննին և դէպ 'ի հարաւ սկսան յառաջ երթալ : Այս կերպով քանի մ'օրէն կրցան Սամոյետներուն խրճիթը հասնիլ , ուր մէկ մէկու հանդիպելնին տարօրինակ զարմանալիք մ'երեցաւ իրենց :

Նորուեկիացիքն երեք շաբաթ միաբան կեցան 'ի կանսինոնտ . սակայն Սամոյետներու դիզած պարէնն ալ սկըսելով սպառիլ , որոյնցին որ այս խեղճ վայրենիներն ալ թշուառութեան մէջ չձգեն : Այնքան արտաքր կարգի դիպուածներու հանդիպելնէն վերջն ալ , հինգ նաւաստի ուրիշ նոր արշաւանքի մ'ալ ձեռք զարկին . իսկ վեցերորդն՝ Եօհան Անտօնսէն , չուրցց իր բարեսիրտ Սամոյետ բարեկամներէն զատուիլ , ու հօն քովերնին մնաց : Իսկ միւսներն Ռուսաց տնակը գացին նաւակը փընտռելու համար : Երկու օր դանկիսյ սառուցին վրայ քաշեցին . բայց որովհետեւ շատ ծանր էր , և մէկ մասն ալ արդէն աւրուեր էր , մէջտեղէն կտորեցին , և երեք օրէն նորէն խրճիթը դարձան : Հօն Սամոյետներուն օգնութեամբ նաւակը կարգի դրին ծովու հորթու մեծ մորթով : Եւ այն նորօրինակ նաւակով հինգ նաւաստիքն

Պրսպս .

ծովը ելան , և կտրըծութեամբ թիափարելով՝ տասն օրէն վայկաց կղզիները հասան :

Հօն ալ առջիններուն պէս հիւրասէր Սամոյետներու խմբի մը հանդիպեցան , բայց առանց կարող ըլլալու իրարու լեզուն հասկընալ . որովհետեւ անոնք ոչ ուուս և ոչ ֆինիանց լեզուները գիտէին : Ութ օր կենալնէն վերջը , նաւաստիքն բալխիբի մը մէջ փոխադրուեցան իրենց հիւրընկալաց ձեռքով , և կղզոյն դէպ 'ի հարաւային կողմը ուղղեցին ընթացքնին . և վերջապէս յաշողեցան նաւու մը ձայն տալ և մէջը մտնալ : Չորս հօգի էին . հինգերորդն վերջի Սամոյետներուն հիւրասիրութեան վրայ զմայլած՝ քովերնին մնացեր էր :

Այսպէս օգոստոսի մօտ Ֆրէյա նաւուն նաւաստեաց եօթն հոգիէն չորսն՝ իրենց տուները դարձան , այնչափ դժբնդակ զիպուածներու հանդիպելնէն վերջը : Մէկը մեռեր էր , և անշուշտ զիակըն արջերուն կերակուր եղած էր . իսկ երկուքը Սամոյետներուն քով մնացին : Իսկ Դոպիէսէն նաւապետին , որդւոյն , խոհարարին և նաւաստեաց զլխաւորին վրայ դեռ լուր մը չլուեցաւ :

Բ

ԱՆՏՔ Միդդերհոլմի .

Ահաւաստիկ ուրիշ տխուր տեսարան մ'ալ , բայց աւելի աղէտալի , որ Ֆրէյայ նաւաստեաց արկածից հակադրութիւն կրնայ սեպուիլ :

1872ի հոկտեմբերին Բևեռոյին սահմանաց մէջ տիրած յանկարծական ցուրտը , Սբիցպէրկի հիւսիսային կողմերու սառուցին մէջ քանի մ'օրսորդ նաւակներ արգիլեր էր : Այսպիսի տխուր լուրն այնչափ մեծ ազդեցութիւն չունեցաւ Նորուեկիացւոց վրայ , որոնք գիտէին թէ տէրութիւնը հոգ ունեցեր էր փայտէ հաստատուն շէնքեր կառուցանելու Միդդերհոլմի մէջ , որ Գորասէն հրուանդանին զլխաւոր մասերէն մէկն է . և ուր ամեն տեսակ առատ

4

պայար կը գտնուէր : Իրովուն մէջ բրու- նուող նաւերն ալ տեղեկութիւն ունէին այս ապաստանարանին, և յոյս կար որ նաւարկողաց մեծ մասն անշուշտ հօն կ'երթայ ձմերելու :

Եւ յիրաւի այսպէս հանդիպեցաւ անոնցմէ շատերուն . որոնք պարապ տեղ երկար ժամանակ գեղեցիկ օգե- բու սպասելէն վերջը, հոկտեմբերի առ- յի օրերէն հասկըցան թէ ձմեռը հօն անցընելու պիտի բռնադատուին : Հոկ- տեմբերի երկրորդ շաբաթը՝ երկու նա- ւակ կտրեցին ծովուն այն անցքը որ զկրասհուք Միդդէրհուքէն կը բաժնէ : Ռէսովուրի ջերմաչափը զրօյէն 8էն 15 աստիճան վար իջեր էր : Աշնան մէջ ջերմաչափին այսչափ չափազանց իջ- նալը՝ դեռ ևս ծովուն վրայ մեծ ազդե- ցութիւն ըլլաւ ըրած, տակաւին նաւ- արկելին ըլլալովը . և ասոր պատճառն կուլի՛ - Սըրէիմ՝ անցքին բերած տաք ջրերն էին :

Միդդէրհուքի ապաստանարանն ընդ- արձակ էր ու տաք, և ոչ միայն ուտե- լեաց, զգեստի և փայտի առատ պա- շար ունէր, այլ այնպիսի գործիքներ ալ որոնցմով քնեռային գաւառաց մէջ կորսուած մարդիկ կարենան աշխա- տիլ, և գործունեայ կեանք վարել . որ մեծապէս հարկաւոր էր այն երկիրնե- յուն մէջ տիրող երկու ահաւոր հիւան- դութեանց, թմրութեան և արեան ա- պականութեան հետեանք ախտից՝ առ- ջնն առնելու համար :

Հոկտեմբերի մէջ հօն հասնող նա- ւաստիքը 17 հոգի էին . մէջերնէն մէկն անցքին ժամանակը մեռեր էր : Ասոնք Մադիլա նաւէն էին, որ Ֆրէյլայ պէս ստիպուեր էր իր մարդկանց մէկ մասը արձըլելու . որպէս զի մնացողներուն բոււական ըլլայ նաւուն մէջի՝ ապրուս- տը : Այնպէս կ'երևայ որ ապաւինելոց

1 Աշխարհադրական ընկերութիւնն այլ և այլ փուզարկութենէ վերջը իմացաւ, որ նաւուն մէջ նաւապետն և մէկ նաւաստի մը մնացք էին, ո- րոնք նաւուն վերահաս վաանդը տեսնելով ծով- ևեղիքն էլան ու վրանի մը մէջ քնակեցան, ուր անցիլով ամառ անօթութենէ և ջրտէն մեռած գտնուեցան :

մէջ կտրիճ և հմուտ առաջնորդ չկար, որով իւրաքանչիւրն իր ուզած կերպով վը շարժեցաւ :

Հոկտեմբերի 15էն մինչև այն ժամա- նակ յորում քնեռային գիշերն իր տը- խուր ստուերը երեք ամիս կը տարածէ՝ միայն հիւսիսայգին փայլելովն երբեմն երբեմն ընդհատուելով, նաւաստիք որ- սորդութեան պարապեցան . սակայն քիչ բան ձեռք ձգեցին . և իրենց օրա- գրութիւնն կը յիշատակէ թէ բոլոր երկու արջ, երկու կապուտ աղուէս և քանի մ'եղջիբու որսացած ըլլան : Երբ գիշերն վրայ հասաւ, տանը դուռը փա- կեցին և ալ դուրս չելան . քանի մը հո- գի ալ որ հիւսնութեամբ կը զբաղէին՝ երեսի վերայ թողուցին զայն . և պէտք չունենալով, որովհետև անցէկ պատ- սպարեալ էին ցործեալ, կուշտ և լու- սաւորած, և անգործութեամբ և քնով իրենց աղատութեան օրերուն կը սպա- սէին : Ամենը մէկ խուցի մէջ ամփո- փուելով, որպէս զի աւելի կրակ վա- ունն, և ոչ իսկ կերակուրնին պատ- ռաստելու հոգ կ'ընէին . այլ միայն պահ- ծու բաները ուտելով, որոնց համար աշ- խատութիւն կարևոր չէր :

Այս անգործութեան, սննդութու- թեան և անոնց հետեանք աղտոտու- թեան աղէտալի արգասիքն՝ շուտով վրայ հասան : Դեկտեմբերի 2ին մէկը հիւանդացաւ, 19ին ուրիշ մը, 24ին գրեթէ ամենքը :

Այն տանն հարկ եղաւ երկրորդ սե- նեակ մ'ալ պարտաստել, որպէս զի հիւանդները հօն հանգիստ կերպով պառկին անկողնոց վրայ, և զիրենք խնամեն ընկերներէն երկուքն, որոնք դեռ չէին հիւանդացած : Չերմաչափը որ դեկտեմբերի 16էն մինչև 20 փո- խուեր էր, յունվարի 7ին 25 աստի- ճանի իջաւ, որով հիւանդներն ալ սաս- տիկ ծանրացան : 19ին երկու հոգի մեռան : Սակայն դեռ այս ահաւոր ցուրտին ալ Միդդէրհուքի պահծու ջրերն չէին սառած, ինչպէս իրենց օ- լազիրը կը զրուցէ :

Անկէ վերջը շատ օր նաւաստեաց

առողջութիւնը անստոյգ մնաց մինչև փետրուարին կէսը, յորում սաստկացան հիւանդութեան նշանները, և նոյն ամսուս 21ին երրորդ մ'ալ մեռաւ: Յուրոր 29 աստիճան էր, բայց սկսեալ էր հորիզոնին վրայ արևու ճառագայթն փայլել: Այս ժամանակներս երկու հոգացողներէն մէկն ալ կը հիւանդանայ, և օրագրին շարունակութիւնը իր ընկերոջ կը թողու. « Մարդ չկայ հօս, կըսէ նոր գրիչը, բաց 'ի մէկ հոգիէ' այսչափ բազմութիւն խնամելու համար. Աստուած ողորմի մեզի »:

Ասկէ անդին օրագիրը միայն յերմայափին և մեռելոց վրայ տեղեկութիւն կու տայ: Փետրուարի ամսոյն 23ին ցուրտը 31 աստիճանի հասաւ, որ ձմեռուան ամենէն սաստկագոյնն է: Մարտի ամսոյն առջի տասնուհինգ օրուան ցուրտը քիչ մը կակղցաւ. բայց նորէն 16էն մինչև 26 սաստկացաւ, 25 աստիճանէն 30: Ապրիլի 4ին յերմայափական զննութիւնք կը գաղբին, և տասը մեռելք նշանուած են մինչև այս օրը: 19ին նոր ձեռք մը մետասաներորդ վախճանեալ մ'ալ կ'աւելցնէ, ետևէն պզտիկ իմաստ մ'ալ յարելով, որ գրողին խեղքը ցնորից մէջ ըլլայ կը յայտնէ:

Օրագրութեան նշանակածներուն հաւմեմատ ասոնք են նոյն ձմեռուան մէջ հանդիպած զլլատուր և ցաւալի գէպքերն: Կը մնայ ըսել թէ ինչ վիճակի մէջ գտնուեցաւ Միզգէրհոլմի տունը, երբ Մաք նաւապետը յունիսի 18ին հօս հասաւ: Մաք նաւապետը յունիսի 16ին հասաւ Իսֆորտ, և շատ փորձ փորձելէն վերջը՝ հարկ եղաւ յուսահատիլ նոյն օրը Միզգէրհոլմի չէրքը մտնալէն 17ին առաւօտը, նաև մը խաւրեց հրամանատարով. որ տասն ժամուշանալէն վերջը դարձաւ, լուր բերելով որ 'ի Միզգէրհոլմ օղջ մարդ չկար, և բաց 'ի գիականց ուրիշ բան չէին գտած. և անոնցմէ մէկուն վրայ Դեխէսէն Պէկէն նաւապետն տոմսակ մը կար, որ հրամանատար էր Ելլիտաւ շոգենաւին: Այս տոմսակը կ'ըսէր որ առջի օրը Ելլիտայի նաւա-

պետը Միզգէրհոլմ եկեր, և բոլոր թղթերը ժողվեր էր:

Երկրորդ օրը Ելլիտա Ատլէնդապէն դառնալուն առեւն, Մաք նաւապետին նաւուն հանդիպեցաւ, և երկու նաւապետք միաբան ցամաք ելան, և երեկոյեան ժամը 3ին հասան 'ի Միզգէրհոլմ: Տանը մտերը տեսան զգետաներու, վերմակաց, մուշտակներու և ուրիշ ասոնց նման բաներու կոյտ մը, որ անշուշտ մեռեալներուն կը վերաբերէին, և ողջ մնացողներն ձեռուս տարեր էին, որպէս զի չըլլայ թէ նոյն հիւանդութեամբ իրենք ալ բռնուին:

Քիչ անդին փայտէ չրջանակ մը տեսան ձիւթապատ լաթով մը զոցուած: Մօտեցան մէկզի վերուցին լաթը, և զարհուրանօք ետ քաշուեցան, տեսնալով հօս հինգ դիակունք: Սակայն ալ աւելի ահաւորանոյն տեսարանք կը մնային իրենց տանը ներսը:

Երբ առջի մասին դուռը բացին, հարկ եղաւ ետ ետ քաշուիլ սաստիկ գարշահոտութենէն: Սակայն երկու երեք հոգի յանձն առին շունչերին բռնելով ներս մտնել և արտորանօք բանալ բոլոր դռները ու պատուհանները: Մէկ ժամ ստէպ ստէպ խունկ ծխեցին, որպէս զի կարենան ներսը կենալ:

Այն ատեն տեսան հաւաւոր տեսարանը: Նաւատիրն երկու սննեակի մէջ բնակած էին. ալ կողմինին մէջ տարածուեր էին վեց նիհարացած դիակունքբորբոսեալ և գարշելի դէմքերով. ձախին մէջ երեք մեռել պառկած էին. չորրորդ մը սնտուկի վրայ սարածուեր էր, սրունքները կախած, և դուխը ալ ձեռքին վրայ կռթնցուցած: Այս յետինն ամենէն կարիճն և ամենէն աւելի ինքը զինքը հոգացողն. եղած պիտի ըլլայ. մուշտակէ զգեստ և դիխարկ մ'ունէր՝ և ձեռքը ճերմակ բրդէ ձեռնոց անցուցեր էր. երեսին արտաքին կողմը աղէկ մնացեր էր, իսկ միւսը սաստիկ վիրաւորուած, և սնտուկին վրայ արիւնը հասեր էր: Համարեցան որ ասիկայ յետին մնացողն է, որ զինքը այնքան մեռելոց մէջ միայն տեսնե-

լով վրան յիմարութիւն եկեր է, և անոր հետեանք պիտի ըլլայ գլխուն վիրաւորուիլը: Սոսկումն կ'ազդէին մէկալ երեք դիակումքն ալ... Անոնց ուտելեաց յետին մնացորդներն ալ ժողովեցին, 3 հաց, 4 կամ 5 շաքարի գլուխ, և չոր ընդեղինաց գոց տուփ մը:

Ելլիտայի նաւաստիքը այս խեղճ մեռելները թաղեցին, բաց 'ի երկուքէն՝ զորս անկարելի եղաւ գտնել:

Տխուր արարողութիւնը կատարելէն վերջը, բնակութիւնը դարձան մնացած ուտելեաց վիճակը քննելու համար: Շատ տեսակ առատ ուտելիք և վառելու փայտ գտան և զանազան հիւանդութեան գործիներ:

Այն պահէն միտերուն՝ որոնք շատ ուժով գոցուեր էին՝ ամենեկին չէին դպած, նոյնպէս և չոր ընդեղինաց և զետնախնձորի. այլ մինչև վերջին վայրկեանն ուրիշ բան չէին կերած՝ բայց աղած և ընդհանրապէս հում միս, խոզի ճարպ, կաթով պատրաստուած բաներ, մանրած մտով խառն լիպիկի արգանակ. և ամենեկին ձեռագործ աշխատութիւն չգտան:

Այս երկու դէպքը քովէ քով դնելուն նպատակն՝ անոնց մէջ տեսնուած հակադրութիւնը դուրս ցատքեցնելու համար էր: Մէկ կողմանէ Ֆրէյայ նաւաստիքը անդադար և դիւցազնական ճրգանց մէջ՝ ամենեկին օգնութիւն չունին, ոչ ուտելիք, ոչ զգեստ, ոչ գործիք, ոչ վառելու փայտ և ոչ պատսպարան. և չէ թէ միայն վաղուան՝ այլ և ոչ զալիք ժամուն վրայ ապահով ըլլալով: Ամեն վայրկեան կարգէ դուրս ոյժ պէտք կ'ըլլայ վերահաս մահուրէն ազատելու համար, գիշերն անհանգիստ, քունն անյարկ. ամեն վայրկեան բռնադատուած են անօթութեան, ցրտոյն, արջերուն, թմրութեան և մահուան հետ կռուիլ: Եւ սակայն Ֆրէյայ նաւաստեաց եօթնէն վեցը սպրեցան այնպիսի ահաւոր կէտերէ՝ որոնք ահաւորագոյն էին քան զգերեզմանն:

Անդին կը տեսնեմք խումբ մը մարդկանց, ամենքն առողջ, որոնք հանգըս-

տութեամբ շէնքի մը մէջ կը մտնան. իրենք զիրենք անհոգութեան և թութեան կու տան. կը թողուն ամենօրեայ կենաց պէտք եղած խնամքը, և թշուառութեամբ կը կորսուին:

Դիւրին է բաժնեկրօնու հետևութիւնը հանել, որ կը ճշմարտէ այն հին առածը որ կ'ըսէ. « Օգնէ քեզի՝ որ երկինքն ալ օգնէ »: Եւ իրաւցրնէ. այնչափ անխոնջ գործունէութիւն կայ Ֆրէյայ նաւաստեաց վրայ՝ որչափ թշուառ անհոգութիւն 'ի Միդգէրհոք ապահինելոց վրայ. ուր ամեն տեղ բայց մանաւանդ Բեեռային գաւառաց տակ՝ շատ աշխատին է բժշկաց զըլխաւոր ու կարևոր պատուէրն. վասն զի անով կարելի է դէմ դնել այն հիւանդութեանց՝ որ արեան ապակիւնութեան հետեանք են. աշխոյժ կեանքով ու մաքուր օդ չնշելով, որ ամեն դեղերէն աւելի ազդու են: Սամոյետը ինչպէս ալ ըլլայ օդն՝ ջրային ուժոյ փորձերէն ետ չեն կենար: Եթէ գէշ է՝ իրենց տնակներուն մէջ զանազան աշխատութեանց կը զբաղին. իսկ եթէ աղէկ և պայծառ, որսի կ'երթան. և եթէ՝ աղօտ և միգապատ, դարանի կը նստին. և թէպէտ տնակներէն ալ շատ չհեռանան՝ սակայն աշխատութիւննին պարտապի չերթար, վասն զի վայրի կենդանիք, մասնաւորապէս արջք և եղջերուք բնակութեանց կը մօտենան՝ սնունդ գտնալու համար:

Վայրի որսոց տաք արիւնն ալ կը խմեն, և այն է իրենց զեղը արեան ապակիւնութեան դէմ: Իրենց ծովեզերքերէն ընդհանրապէս չեն հեռանար: Երբ վայրի որսը պակսի, այն տեսն ձկնորսութեան կ'ելլան, թէպէտ և ծովը սառած ըլլայ: Վասն զի ծովու հորթերը սառոյցները կը ճեղքեն՝ արտաքին օդ չնշելու համար. և շատ անգամ ճերմակ արջուրու կերակուր կ'ըլլան, որոնք համբերութեամբ բիւրեղեայ որջերէն ելլելու առթի կը սպասեն: